ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Բ. գ. դ., պրոֆեսոր, ՎՊՀ
ԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գյումրու թիվ 32 հիմնական դպրոցի և Գյումրու «Ֆոտոն» վարժարանի աշխարհագրության ուսուցիչ

ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ ՁԻՐԱՎԻ ԴԱՇՏԻ ՄԱՍԻՆ[1]

Բանալի բառեր.- *տեղանունների բառարան, Նպատ լեռ, Ձիրավի դաշտ, տեղեկության ճշգրտում, արևելյան ստորոտ*

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի հեղինակները Ձիրավի դաշտի մասին գրում են. «Դաշտ, ճակատամարտի վայր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Ծաղկոտն գավառում (ըստ ոմանց՝ Բագրևանդ), Արածանիի ակունքի շրջանում, Ծաղկանց լեռների Նպատ լեռնագագաթի հյուսիսային ստորոտներին: Կազմում էր Ալաշկերտի դաշտի հարավ-արևելյան մի փոքրիկ հատվածը և փռված էր նոր ժամանակների Էրզրումի նահանգի Բայազետի գավառի Դիադինի և Կարաքիլիսայի գավառակներում՝ Ջուջան գյուղից և սուրբ Հովհաննես վանքից մինչև Դիադին գյուղաքաղաքի մոտերքը: Ոմանք նույնացրել են Աբաղայի դաշտին, որ անընդունելի է»[2]:

Շեշտենք, որ Աբաղայի դաշտը գտնվում է Բերկրի գետի վերին հոսանքում (այժմյան Բայազետից դեպի Վան գնացող ավտոմայրուղին անցնում է հենց Աբաղայի դաշտով), որտեղ Աբաղա գավառակն է, իսկ Բերկրիի ստորին հոսանքում՝ Բերկրի քաղաքից դեպի հարավ, Բերկրիի դաշտն է: Աբաղայի դաշտը Բայազետից դեպի հարավ՝ դեպի Վան գնացող ավտոմայրուղու ճանապարհին է, իսկ Ձիրավի դաշտը՝ դեպի արևմուտք՝ դեպի Ալաշկերտ գնացող ավտոմայրուղու ճանապարհի հարևանությամբ: Աբաղան Ծաղկանց լեռներից հարավ-արևելք է, Ձիրավը՝ հյուսիս: Սրանք շփոթել անհնար է:

1 Հոդվածի համահեղինակ Վ. Եղիազարյանը կատարել է հայագիտական և աղբյուրագիտական քննությունը, իսկ Ա. Գրիգորյանը կատարել է աշխարհագրական քննությունը:

2 Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3, Ե., 1986, էջ 478:

Սույն հոդվածի **խնդրո առարկան** Ձիրավի դաշտի աշխարհագրական տեղադրության ճշգրտումն է: Հոդվածի **նպատակն** է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում Ձիրավի դաշտի մասին եղած տեղեկությունը լրացնել և ամբողջացնել: Հոդվածի **արդիականությունը** հայագիտության մեջ Ձիրավի դաշտի մասին ճշգրտված մասնագիտական տեղեկության ներդրումն է: Հոդվածում կիրառել ենք **պատմական և հերմենևտիկայի** մասնագիտական մեթոդները: Հոդվածի **գիտական նորույթը** Ձիրավի դաշտի տեղորոշման և «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում ներկայացված տեղեկության ճշգրտումն է:

Հարկ է նշել, որ Ձիրավի դաշտի մասին առաջին վկայությունը հանդիպում է Փավստոսի պատմության հինգերորդ դպրության դ գլխում՝ «Յաղագս դարձեալ պատերազմին, որ եղեւ ի Բագաւան յաւանին Բագրաւանդ գաւառին ընդ Պապ թագաւորն Հայոց եւ ընդ զօրսն Պարսից» վերնագրով:

Ըստ Փավստոսի՝ հույների խորհրդով Պապը և Ներսեսը բարձրանում են Ծաղկունյաց լեռնաշղթայի Նպատ լեռը և այնտեղից դիտում ճակատամարտը. «Ապա թագաւորն Պապ հաւանեցաւ բանիցս այսոցիկ. առ ընդ իւր զմեծ քահանայապետն Ներսէս, եւ ելանէր նստէր ի վերայ նպատական լերինն. եւ ամենայն զօրքն Յունաց եւ Հայոց իջանէին ի տեղի պատերազմին: Ապա եկն եւ զօրավարն սպարապետն Հայոց Մուշեղ, եւ եբեր զնշանսն իւր եւ զզէնն առ Ներսէս եպիսկոպոսապետն, զի օրհնեսցէ զնա, եւ իջցէ ի պետերազմ: Եւ ի ժամանակին յայնմիկ յիշեաց թագաւորն Պապ զհին զրոյցսն, եւ ասէ. Յիշեցի ես զայն, զի բարեկամ է Մուշեղն թագաւորին Պարսից Շապհոյ: Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ արձակեաց զկանայս թագաւորին Պարսից Շապհոյ հանդերձ ժանուարօք եւ վաշտկանօքն. եւ լուեալ եւս է իմ թէ՝ ի Պարսիկս խօսի. արդ մի՛ մտցէ դա ի ճակատ»[1]:

Ուշադրություն դարձնենք շարունակության մեջ հանդիպող մի փաստի, որ Մուշեղն իր զորքով մի պահ կորչում է թագավորի տեսադաշտից, և փորձենք տեղանքում պատկերացնել ասվածը[2]:

1 **Փավստոս Բուզանդ**, Ե, դ:

2 Նշենք, որ Վ. Եղիազարյանն առիթ է ունեցել անձամբ այցելելու նաև պատմական Հայաստանի այդ տարածքներ՝ Բայազետից դեպի Դիադին ու Ալաշկերտ, անցել Ծաղկունյաց լեռների և Հայկական պարի միջակա դաշտավայրով, եղել Արածանիի վերին հոսանքներում, նաև Նպատ լեռան ստորոտին և իր աչքով տեսել Ձիրավի դաշտը:

«Եւ մինչ դեռ նա զաղօթսն մատուցանէր առ Աստուած, խաղացեալ ճակատեալ իբրեւ զհուր ամենայն զօրքն Հայոց ընդդէմ զօրացն Պարսից, իսկ գունդն մուշեղեան յառաջեալ քան զայլ գունդսն՝ յառաջամուխ տագնապեալ երթային. մինչ զի նայէր թագաւորն եւ տեսանէր զի ըստ ակն անգանէին, մինչ զի ոչ երեւէին թագաւորին նշանքն Մուշեղի: Իսկ իբրեւ չերեւել սկսան նշանքն, աղաղակել սկսաւ թագաւորն Պապ առ Ներսէս եւ ասէ. Դու խաբեցեր այրեցեր զիս. զի ասացի ես բանս, մի՛ յղեր զայրն զայն ի գործ պատերազմիս. ահա ի զօրսն Պարսից անկաւ, եւ արդ մեծամեծ վնաս գործեսցէ: Եւ ասէ եպիսկոպոսապետն Ներսէս. Մի՛, արքայ, մի՛ կարծեր. զի ոչ ստէ մեզ այրն այն. այլ տեսցես քեզէն զքաջութիւն նորա, զոր գործեսցէ ծառայ քո առաջի քո»[1]:

Ինչպես վկայված է, խնդրո առարկա դաշտը Նպատ լեռան ստորոտին է, իսկ Փավստոսի վկայությունից բացի Նպատ լեռան մասին հիշատակություն է թողել նաև Փարպեցին. «Եւ լուեալ զայսպիսի բանս անօրէն դատաւորացն ի սրբոյն Յազդայ՝ սրով կտրել զգլուխ երանելւոյն հրամայեցին, մերձ ի տեղի սուրբ մատրանն առաքելանման նահատակին սրբոյն Գրիգորի, ի գեօղն որ կոչի Բագաւան, ի նահանգին Բագրեւանդայ, ի յանջակողման լերինն որ անուանի Նպատ մօտ ի սուրբ տեղի մատրանն որպէս երկու քարընկեցօք: Եւ կատարեալ սրբոյ Սիւնի սեպհին Յազդայ զընթացս նահատակութեան իւրոյ յամսեանն հոռի, որ օր վեշտասան էր ամսոյն, եւ ամփոփեալ նշխարք նորա եդան անդէն ի սուրբ մատրանն Գրիգորի»[2]:

Ձիրավի դաշտի մասին վկայություն է թողել Մովսես Խորենացին Գ գրքի լէ գլխում՝ վերնագրված «Ձիրավում տեղի ունեցած մեծ պատերազմի մասին, և ամբարիշտ Մեհրուժանի սատակումը»: Ուշագրավ է, որ Խորենացին է առաջին անգամ տալիս այս դաշտի անունը. «Պատերազմը գումարվեց Ձիրավ կոչված դաշտում, և ճակատներն իրար մոտեցան: Հայոց քաջ նախարարների պատանիներն իրենց կամքով խիզախելով՝ մտան երկու ճակատների մեջ, առաջնորդությամբ իրենց սպարապետ Սմբատ ասպետի՝ Բագարատի որդու, որ Բագրատունյաց ցեղից էր: Պարսից զորքերի միջից էլ դուրս եկան նրանց հասակակիցները, երկու ճակատների մեջ այս ու այն կողմը շարժվեցին և ցրիվ եկան: Երբ պարսից պատանիները ետ էին դառնում, մերոնք անմիջապես հասնում էին նրանց հետևից և ինչպես փոթորիկ, որ անտառը տերևաթափ

1 **Փավստոս Բուզանդ**, Ե, դ:

2 **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 342:

է անում, այնպես էլ նրանք արագորեն նիզակներով նրանց վար էին գցում ձիերից և սառը դիակները գետնի երեսին փռում, քանի որ նրանք չէին կարողանում իրենց ճակատի մեջ մտնել: Իսկ երբ պարսիկներն էին մերոնց ետ դարձնում, սրանք մտնում էին հունաց՝ վահաններով պատսպարված ճակատը, իբրև մի ամուր քաղաք և ամենևին չէին վնասվում: Որովհետև Գորգոնոսլ, հետևակ զորքի հրամանատարը, այսպես վահաններով պատեց Պապի ճակատը, ինչպես պարսպով»:

Խորենացին տալիս է ոչ միայն Ձիրավի դաշտի անունը, այլև իր վկայությամբ հուշում է, որ դաշտը գտնվում է ոչ թե Նպատ լեռան հյուսիսում, այլ դեպի արևելք, քանի որ արևի ճառագայթները առավոտյան ընկնում են զորքի վրա և խանգարում կռվողներին. «Երբ Մեծն Ներսեսը այս բոլորը տեսավ, բարձրացավ Նպատ լեռան գլուխը և ձեռքերը դեպի երկինք բարձրացրեց և առանց իջեցնելու աղոթք էր անում, նախամարգարե Մովսեսի նման, մինչև երկրորդ Ամաղեկը պարտություն կրեց:

Իսկ երբ արևը ծագեց մեր զորքերի դեմ ու դեմ, պղնձապատ վահանների ցոլքը լեռների վրա էր փայլատակում ինչպես մեծ ամպից, և այդ ճակատից դուրս էին թռչում մեր նախարարներից լավ զրահավորվածները ինչպես փայլատակող ճառագայթներ, որոնց տեսքից միայն պարսկական գունդը երկյուղի մեջ ընկավ, բայց մի քիչ նաև մեր գունդը, որովհետև դիմացից ծագած արևի պատճառով չէր կարող դեմուդեմ նայել: Բայց երբ միմյանց ընդհարվեցին, ամպը հովանի եղավ և մեր կողմից սաստիկ քամի փչեց պարսկական գնդի դեմ: Կռվի խառնուրդի ժամանակ Սպանդարատ Կամսարականը պատահեց մի մեծ խմբի, որի մեջ էր քաջ Ղեկաց (լեզգիների) թագավոր Շերգիրը, որ ճակատի մեջտեղում պինդ կանգնած էր՝ միջին գնդի գլուխն անցած: Սպանդարատը հարձակվեց, խումբը ճեղքեց և քաջին գետին տապալեց շանթահար եղածի նման, և խումբը շուռ տալով փախուստի մատնեց: Եվ այսպես հայոց և հունաց զորքերն առհասարակ, երկնային օգնությամբ զորացած, թշնամիների դիակներով ամբողջ դաշտը լցրին և մնացածներին փախցնելով հալածեցին: Սրանց թվում էր և Ուռնայրը, Աղվանից թագավորը, որ խոցված էր Մուշեղից, Վասակ Մամիկոնյանի որդուց, և պատերազմից դուրս հանեցին»:

Հայ մատենագրության մեջ հանդիպում են այլ վկայություններ ևս Ձիրավի դաշտի մասին: Հովհաննես Դրասխանակերտցին, օգտվելով Խորենացու պատմությունից, պարզապես անորոշ տեղագրությամբ հի-

շատակել է Ձիրավի դաշտի անունը[1]: Իսկ 10-րդ դարի պատմիչ Մեսրոպ երեց Վայոցձորեցին հիշատակում է Ձիրավի ճակատամարտի մասին պատմական այս դեպքը՝ աղբյուր ունենալով 5-րդ դարից ավանդված «Հայոց մնացորդաց Արևելից գիրք»-ը, որի պատմական արժեքը չի կարելի թերագնահատել, ինչպես չի կարելի թերագնահատել նաև Մեսրոպ երեցի պատմությունը:

Մեջբերենք Վայոցձորեցու վկայությունը. «Եվ հավաքեցին հայոց ու հոռոմոց զորքերը Նպատակ դաշտում՝ հայոց Պապ թագավորի մոտ, նրանց հետ տեղափոխվեց նաև Ներսես եպիսկոպոսապետը: Իսկ Պապը թույլ չէր տալիս պատերազմ մտնել Մուշեղ Մամիկոնյանին՝ ասելով, թե՝ «Այսօրվա համար թողեց Մուշեղը Շապուհի կանանց, որ ապստամբելով մեր դեմ առավել կորուստներ պատճառի մեր զորքերին, քան մեր թշնամիները»: Իսկ Մուշեղը ընկնում է սուրբ Ներսեսի ոտքերը և բարեխոս է ունենում ու միջնորդ և բռնելով նրա աջը՝ խիստ երդվում է և ասում, թե՝ «Այդ խորհուրդն իմ միտքը չի ընկել, որ դուք կարծում եք»: Եվ ասում է սուրբ Ներսեսը Պապին. «Ես եմ դրա վնասի տերը այսօր»: Եվ ապա լսեց թագավորը, հրամայեց նրան զինել պատերազմի: Իսկ սուրբ Ներսեսն արթուն է մնում գիշերը նրանց հետ միասին և մատուցում է պատարագ և հաղորդակից դարձնում Տիրոջ արյանն ու մարմնին արժանի դարձածներին: Եվ Մուշեղ Քաջը բերեց պատերազմի գործիքները՝ զենքերը, սուրբ Ներսեսի մոտ, որ նա հագցնի իրեն: Եվ բերում էին հայոց և հոռոմոց բոլոր զորավարները սուրբ Ներսեսի մոտ, որ խաչակնքի զենքերը, և նա խաչակնքեց նրանց զենքերը և օրհնում էր նրանց: Իսկ Մուշեղը առնում է սուրբ Ներսեսի թաշկինակը և կապում իր գեղարդին և առաջ գնում դեպի պատերազմ: Եվ սուրբ Ներսեսը ելնում է Նպատ լեռան գագաթը և բարձրացնելով իր սուրբ ձեռքը անխոնարհելի երկինք՝ աղոթում է առ Աստված»[2]:

Հիշյալ տեքստում կատարել ենք նաև ծանոթագրություններ Նպատակ դաշտի և Նպատ լեռան մասին՝ մասնավորապես ճշտելով, որ Նպատակ դաշտը ձեռագրերում հանդիպում է Նպատ դաշտ ձևով, իսկ

1 **Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Գ. Բ. Թոսունյանի**, Ե., 1996, էջ 52-53:

2 **Մեսրոպ Վայոցձորեցի**, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և սուրբ Ներսես հայոց հայրապետի պատմությունը, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Վանո Եղիազարյանի**, Վանաձոր, 2015, էջ 71:

Մեսրոպ երեցի խոսքից էլ հասկացվում է, որ Նպատակ դաշտը Նպատ լեռան մոտ է, ուստի խոսքը Ձիրավի դաշտի մասին է[1]:

Ձիրավի դաշտի մասին ուշագրավ վկայության ենք հանդիպում Միքայել Չամչյանցի «Հայոց պատմության» առաջին հատորում. «...և իջեալ ի դաշտն՝ որ կոչիւր Ձիրաւ, բանակեցան անդ առ Նպատ լերին: Եկեալ և պարսիկք՝ հարին զբանա իւրեանց յարևելս կոյս հանդեպ նոցա՝ ճակատ առ ճակատ»[2]:

Ինչպես տեսնում ենք, Միքայել Չամչյանցն այստեղ հստակ նշել է, որ պարսիկները եկան և բանակեցին Նպատ լեռան արևելյան կողմում՝ **«յարևելս կոյս»**: Ավելին՝ Միքայել Չամչյանցն իր պատմության երրորդ հատորում ավելի որոշակի է գրում արևելքում լինելու մասին. «Ձիրաւ դաշտ, որ և կոչի յոմանց Ապաղի դաշտ, որ առ Նպատ լերամբ՝ յարևելից»[3]:

Հայր Ղևոնդ Ալիշանը ևս «Այրարատ»-ում անդրադարձ ունի Ձիրավի դաշտին. «Այլ ‘ի ստուգագոյն պատմութեան մերում նուիրական է լեառնս՝ յիշատակաւ Մեծին Ներսիսի, և ոխերիմ պատերազմին՝ որ սովորաբար կոչի յանուն Ձիրաւ դաշտի՝ յելից կուսէ նորին տարածելոյ մինչեւ ‘ի սահմանս Կոգովտի և ընդ մեջ Տիատինայ և Ս. Յովհաննու վանաց, զորմէ կայ մեզ ճառել ոչ յետ բազմաց ‘ի տեղագրութեան Ծաղկոտան»[4]: Նկատենք, որ կրկին **«յելից կուսէ»**՝ արևելյան կողմի մասին է խոսքը, որը երկրորդում է նոր վկայությամբ. «Յելից Ճուճանայ և մեծի վանաց Ս. Յովհաննու՝ ձգեալ տարածանի Ձիրաւ դաշտ մինչեւ մերձ ‘ի սահմանս Տիատինոյ, ընդ հիւսիսի, որպէս և յառաջ նշանակեցաք, հռչակեալ վասն մեծի ճակատամարտին, զոր Հայք՝ յետ գերութեան Արշակայ Բ-ի ‘ի դարձին Պապայ ‘ի դրանէ կայսեր, օգնութեամբ Յունաց մղեցին ընդ Պարսս, որոց առաջնորդէր վատչուէր ուրացողն Մերուժան...»[5]:

Մեր որոնումների արդյունքում գտնվեց մի հնագույն քարտեզ, որում ևս Ձիրավի դաշտը պատկերված է Նպատ լեռան արևելյան կողմում:

Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին եւ նոր աշխարհագրաց: Քարտեզ, Վենետիկ, 1751.

---

1 Տե՛ս անդ, էջ 178:

2 **Միքայել Չամչյանց**, Հայոց պատմություն, հտ. 1, Ե., 1985, էջ 465:

3 **Միքայել Չամչյանց**, Հայոց պատմություն, հտ. 3, Ե., 1984, էջ 163:

4 **Ալիշան Ղ.**, Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց Տեղագրեաց, Վենետիկ, Ս. ղազար, 1890, էջ 512:

5 Անդ, էջ 520:

Բացի այս, հարկ է հաշվի առնել նաև, որ ֆիզիկաաշխարհագրական տեսանկյունից դեպի Ձիրավի դաշտ պարսկական զորքի շարժման հավանական ուղղությունը կարող էր համարվել ներկայիս Դողուբայազետ բնակավայրի ուղղությամբ ձգվող ճանապարհը՝ հարմար ռելիեֆի և կարճ ճանապարհի պատճառով: Այն կիրճերով ձգվում է Մակուից դեպի Դողուբայազետ, այնուհետև դեպի Դիադին բնակավայրը՝ հասնելով մինչև Նպատ լեռան արևելյան շրջանները:

Եզրակացություն՝ Ձիրավի դաշտը գտնվում է ոչ թե Նպատ լեռնագագաթի հյուսիսային ստորոտներին, ինչպես ներկայացված է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում, այլ՝ Նպատ լեռան արևելյան կողմում:

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ - Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հայ հին և միջնադարյան գրականությունը, բնագրագիտությունը՝ գրաբար բնագրերի փոխադրությամբ, բանագիտությունը, արդի հայ գրականությունը և գրական քննադատությունը: Տպագրվել են հարյուրից ավելի հոդվածներ, 20 գրքեր: Մի քանի աշխատություններ թարգմանվել և տպագրվել են այլ լեզուներով:

ԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ, Գյումրու թիվ 32 հիմնական դպրոցի և Գյումրու «Ֆոտոն» վարժարանի աշխարհագրության ուսուցիչ

VANO YEGHIAZARYAN, ARA GRIGORYAN - SPECIFICATION ABOUT THE DZIRAV PLAIN - The scientific novelty of the article lies in the addition and correction of the information about the Dzirav plain stated in the «Dictionary of Toponyms of Surrounding Regions of Armenia». The Dzirav plain is located not at the northern foot of Mount Npat, as erroneously stated in the dictionary, but on the eastern side of Mount Npat, which has been proved by bibliographic data and other facts of Armenian studies.

Keywords - Dictionary of Toponyms, Mount Npat, Dzirav plain, information specification, eastern foot of the mountain.

ВАНО ЕГИАЗАРЯН, АРА ГРИГОРЯН - ОДНО РАЗЬЯСНЕНИЕ О ДЗИРАВСКОМ ПОЛЕ - Научной новизной статьи является дополнение и разъяснение информации о Дзиравском поле, которая приводится в «Словаре топонимов Армении и прилегающих областей». Дзиравское поле находится не у северных подножий горной вершины Нпат, как по ошибке представлено в указанном словаре, а в восточной части горы Нпат, что было обосновано библиографическими данными и фактами, имеющимися в других арменоведческих исследованиях.

Ключевые слова: словарь топонимов, гора Нпат, Дзиравское поле, разъяснение информации, восточное подножие.